

նոր մարմինը խաչէն վար կ'առնուէր (L. V. C. էջ 206-207):

2. — Նախահայր Ազամի գագաթին աւանդութիւնը եւ ուրիշներ. — Ս. Յարութեան տաճարին մէջ, Պատանատեղիին արեւելեան կողմը կայ զուռ մը՝ որ կը տանի Գողգոթայի ներքեւը, ուր շինուած է եկեղեցի մը (\*), որուն սեղանին ետեւ պատին վրայ կը գտնուի պատուհան մը, ուր, ըստ աւանդութեան, զետեղուած են մեր նախահօր գլուխը և ոսկերոտիքը գոր Նոյի որդին Սեմ բերած եւ այս տեղ թաղած է. ա՛յն տեղն է ուր մեր Տէրը խաչուեցաւ և իր անբիծ արիւնը թափեց Ազամի գլխուն վրայ և ազատեց զանիկա իր բոլոր սերունդովը (Հա՛ն. էջ 207): Իսկ մի ուրիշ աւանդութիւն կ'ըսէ թէ Նոյ նահապետը Սողոմի ձորին մէջ մեծ քանակութեամբ անփուտ փայտի ծառեր տնկեց և ինքն ալ հոն կը բնակէր տապանը շինելու համար: Ըստ ընդհանուր աւանդութեան, Ազամին մարմինը Բերրոն թաղուած էր, երբ նահապետը տապանը մտաւ, իր հետը առաւ Ազամին մարմինը, եւ երբ ան զուրս ելաւ՝ նախահօր ոսկորները քաժնեց իր զաւակներուն, Գլուխը անդրանիկ որդւոյն՝ Սեմին տուած ըլլալով, ան եկաւ զայն թաղեց Գողգոթայի մէջ (Մար. էջ 200): Ս. Եպիփան իր մէկ գրուածքին մէջ Գողգոթայի մասին կը գրէ. «Իրանք թէ մեր Տէրը Յիսուս Քրիստոս խաչուեցաւ Գողգոթա-

(\*) Ըստ Գանիէլ ռու ուղեգրին (1106-1107) մոզայիֆոեով զարդարուած էր, եւ անոր արեւելեան պատը կը կրէր խաչեալ Փրչիին զարմանալի կենդանի պատկերը, բարձր եւ լայն, իսկ հարաւային Կողմը նմանապէս կար խաչէն իջնելու հրաշալի պատկերը (P. T. S. հատ. IV. էջ 14-15):